ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

N 103Հ «09» հոկտեմբեր 2020թ.

ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 17.02.2015Թ ԹԻՎ 5Ա-Վ2 ՀՐԱՄԱՆԸ ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆԻՆ Ը.00.06 - ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍՈՎ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ «Օրենք») 34-րդ, 38-րդ 63-րդ, 65-րդ հոդվածների պահանջներով,

Հիմք ընդունելով, որ՝

- ՀՀ ԿԳՆ բարձրագույն որակավորման հանձնաժողովի 17.02.2015թ.-ի թիվ 5Ա-վ2 հրամանով Ը.00.06 - Միջազգային տնտեսագիտություն մասնագիտությամբ Դիանա Գալոյանին շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.12.2019թ. թիվ 50-Լ հրամանով ստեղծվել է Դիանա Գալոյանի դոկտորական ատենախոսության ուսումնասիրություն իրականացնելու և եզրակացություն տրամադրելու նպատակով մասնագիտական հանձնաժողով (այսուհետ նաև՝ «Մասնագիտական հանձնաժողով»),

- 05.02.2020թ.-ին Մասնագիտական հանձնաժողովը ԿԳՄՍ է ներկայացրել իր եզրակացությունը, որով արձանագրել է, որ Դիանա Գալոյանի դոկտորական ատենախոսության մեջ առկա են առանց հեղինակների և աղբյուրների նշման փոխառություններ,
- Արձանագրված փաստերի շրջանակներում անհրաժեշտ է գնահատել Դիանա Գալոյանի դոկտորական ատենախոսության համապատասխանությունը ՀՀ կառավարության 8 օգոստոսի 1997 թվականի թիվ 327 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ԿԳՆ բարձրագույն որակավորման հանձնաժողովի 17.02.2015թ.-ի թիվ 5Ա-վ2 հրամանը Դիանա Գալոյանին Ը.00.06 - Միջազգային տնտեսագիտություն մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան շնորհելու մասով անվավեր ճանաչելու վերաբերյալ հարուցել վարույթ,
2. 16.07.2020թ. ժամը 11:00 անցկացնել լսումներ, որոնք վարչական վարույթի մասնակիցների խնդրանքով տեխնիկական միջոցների կիրառմամբ կարող են անցկացվել նաև հեռավար: Քննարկմանը հնարավոր է միանալ հետևյալ հղմամբ՝

https://us04web.zoom.us/j/71953178681?pwd=YjBCNEdZYmtDTHVES2xtUkR5SGtCdz09:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

7/9/2020

X

ՍՄԲԱՏ ԳՈԳՅԱՆ

Signed by: GOGYAN SMBAT 3303830386

ՍՄԲԱՏ ԳՈԳՅԱՆ